ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

21.08.2015թ.
258-ի 5

Ծարավ Աղբյուր համատիրության կառավարիչ
պարոն Հովհաննես Ստեփանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ստեփանյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ծարավ Աղբյուր համատիրության կանոնադրությունը,
2. Տեղեկատվություն կառավարման մարմինների կազմի վերաբերյալ. ովքե՞ր են համատիրության նախագահը, վարչության անդամները, վերստուգիչը, կառավարիչը եւ նրանց պաշտոնները զբաղեցնելու հիմնավոր փաստաթուղթ հաստատված ժողովի կողմից,
3. Ծարավ Աղբյուր համատիրության 2014թ.-ի ֆինանսական հաշվետվությունը՝ հաստատված ժողովի կողմից, ինչպես նաեւ վարչության եւ վերստուգիչի եզրակացությունները,
4. Ծարավ Աղբյուր համատիրության 2015թ.-ի բյուջեն՝ բացված տեսքով եւ հաստատված ժողովի կողմից, ինչպես նաեւ վարչության եւ վերստուգիչի եզրակացությունները,
5. 2015թ.-ի 1-ին կիսամյակում Ծարավ Աղբյուր համատիրության ծախսերը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան